Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. «Դասակարգային կռիվների գիծը ազգերու պատմության մեջ», *Բեյրութ, 1963, 883 էջ*

Հրապարակի վրա է ամերիկահայ մտավորական Լևոն Մարտիրոսյանի «Դասակարգային կռիվներու գիծը ազգերու պատմության մեջ» ստվարածավալ աշխատության առաջին հատորը։

Հայտնի է, որ ամեն տարի լույս են տեսնում քաղաքական տարբեր ուղղության պատկանող սփյուռքահայ մտավորականների բազմաթիվ ուսումնասիրություններ՝ նվիրված հայ ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի ամենատարբեր հարցերին։ Բայց դրանց շարքում, դժբախտաբար, եղակի են այն աշխատությունները, որոնց մեջ բարձրացվում են դարաշրջանի հուզող տեսական-քաղաքական հարցերը, նպաստում սոցիալիստական գաղափարախոսության տարածմանը հայ գաղթավայրերում։

Նման երկասիրությունները, ինչպես և գրախոսվող աշխատությունը նախ և առաջ ունեն ճանաչողական նշանակություն։ Դրանք միաժամանակ նպաստում են այն բանին, որպեսզի գաղութահայությունը, մասնավորապես սփյուռքահայ երիտասարդությունը, հետաքրքրություն հանդես բերի դեպի քաղաքական հարցերը, երիտասարդություն, որի մի զգալի մասը անտարբեր է դեպի տեսական հարցերը և դառնում է քաղաքական չեզոք վիճակում։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է չորս մասից՝ «Հայաստան և հայ ժողովուրդը», «Ռուսաստան և ռուս ժողովուրդը», «Չինաստան և չինացի ժողովուրդը», «Ֆիտել Քասթրո և Քուպայի յեղափոխությունը»։ Գրքի վերջում հեղինակը ընթերցողին տեղյակ է պահում, որ տպագրության է պատրաստ նաև աշխատության երկրորդ և երրորդ հատորները, որտեղ նա, հավանաբար, հետևում է դասակարգային պայքարի գծին ուրիշ երկրների ժողովուրդների պատմության հետազոտության միջոցով։

Գրքի առաջին մասը՝ «Հայաստան և հայ ժողովուրդը», սկսվում է Հայաստանի նախապատմական շրջանի բնութագրմամբ, այսինքն՝ երբ դեռ հայ ժողովուրդը չէր կազմավորվել։ Ապա հեղինակը ընթերցողին տանում է այն հեռավոր ժամանակները, երբ Հայկական բարձրավանգակում հաստատված էթնիկական տարբեր խմբերը դիմում են միավորման զանազան փորձերի, դուրս գալիս նախնադարյան համայնական հարաբերությունների շրջանակներից և ուղղվում քաղաքակրթության ճանապարհը։ Նա մանրամասն շարադրում է նաիրյան երկրների և հատկապես Ուրարտուի սոցիալ-քաղաքական պատմությունը։

Մոտ երկրորդարյա (860—580 մ. թ. ա.) կյանք ունենալուց հետո Ուրարտուն անկում ապրեց՝ մարերի, կիմմերացիների և նոր բարձրացող հարևան ժողովուրդների հարվածների տակ։

Ուրարտուի անկման պատճառը, ինչպես իրավացիորեն նկատում է աշխատության հեղինակը, ոչ միայն արտաքին հարձակումներն էին, այլև դասակարգային այն անհաշտ հակասությունները, որ ներսից ծվատում էին ուրարտական հասարակությանը։ Ինչպես նաիրյան երկրներում, այնպես էլ Ուրարտուում բնակչությունը բաժանված էր թշնամական դասակարգերի։ Շահագործողների մեջ մտնում էին արքայական դասը, ազնվականությունը, դինվորականությունը, քրմերի դասը, շահագործվողների մեջ՝ ռամիկները (մշակներ, արհեստավորներ, գյուղացիներ) և գերիները։ Շահագործողների ու շահագործվողների միջև պայքարն ու հակամարտությունը կազմում էր Ուրարտուի պատմության առանցքը։ Այդ պայքարն այնքան թույլացրեց երկիրը, որ արտաքին վտանգը դիմագրավելը դարձավ միանգամայն անհնարին։ «Ուրեմն, կրնանք ըսել,—գրում է Լ. Մարտիրոսյանը,—թե Ուրարտուի, ինչպես նաև բոլոր հին կայսրությանց անկման պատճառը պիտի փնտռենք դասակարգերու գոյության հանգամանքին մեջ» (էջ 45)։

Ուրարտուի կործանումից հետո ծնունդ առավ մի նոր ժողովուրդ՝ հայ ժողովուրդը։ Հեղինակը հիշտ է նկատում, որ քաղաքակիրթ մյուս բոլոր ժողովուրդների նման հայ ժողովուրդն էլ ապրել է հասարակական հայտնի բոլոր տնտեսաձևերի պայմաններում՝ նախնադարյան համայնական հասարակարգ, ստրկատիրություն, ֆեոդալիզմ, կապիտալիզմ և, վերջապես, իր մեկ

հասկանալով՝ սոցիալիզմ։ Ըստ որում մեկ տնտեսաձևը մյուսին հաջորդել է երկրի արտադրողական ուժերի անընդհատ զարգացման և դրան ուղեկցող դասակարգային ներքին պայքարի ուժեղացման միջոցով։

Օրինակ է հայ կղերա-ֆեոդալական պատմագրության ներկայացուցիչների հասցեին հեղինակի արած բննադատությունը։ Հայ կղերա-ֆեոդալական պատմագիրներից ոմանք առաջ քաշեցին այն կեղծ տեսությունը, որի համաձայն, իբր, հայ ժողովրդի պատմությունը առաջ է ընթացել յուրօրինակ ուղիով, առանց ներքին ցնցումների, առանց դասակարգային կռիվների։ Այս տեսակետը, ինչպես հայտնի է, հետագայում ամբողջովին որդեգրվեց հայ բուրժուական պատմագրության, մասնավորապես, դաշնակ պատմագրության կողմից։ Ուստի պատահական չէ, որ մեր օրերում նույնպես, սովյուրքի գաղթօջախներում դաշնակ գաղափարախոսները ամեն ինչ անում են ապացուցելու համար, թե Հայաստանը բացառություն է կազմել իր հարևանների շարքում, թե այնտեղ բացակայել է դասակարգային պայքարը նույնիսկ կապիտալիստական հարաբերությունների զարգացման շրջանում, թե Հայաստանում դասակարգային պայքար չի եղել նաև դաշնակների տիրապետության օրերին, թե 1920 թ. Մայիսյան ժողովրդական ապստամբությունը և Հայաստանում սովետական կարգերի հաստատումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ դրսից «ռուսների միջամտության» ու ներսից փոքրաթիվ բոլշևիկյան խմբակի «խռովության» արդյունք։ Դեռ ավելին, ձայնակցելով կապիտալիստական կարգերի ջատագովներին, նրանք միայար փառաբանում են այսպես կոչված «ազատ աշխարհը», որտեղ, իբր, նոր հորիզոններ են բացվել հայ համայնքների դասակարգային համերաշխության համար, պաշտպանում ու պրոպագանդում են կապիտալիզմի «տրանսֆորմացիայի», երկու սիստեմների հնարավոր տընտեսական միավորման, միջին դասակարգի առաջացման, դասակարգային պայքարի աստիճանական մարման մասին բուրժուական հակադիտական ու կեղծ կոնցեպցիաները։

Ապրելով ստրկատիրական հարաբերությունների համեմատաբար կարճ ժամանակաշրջան, մոտավորապես մեր թվարկության սկզբից Հայաստանը թևակոխում է ֆեոդալիզմի ուղին։ Զևավորվող ու զարգացող ֆեոդալական արտադրական հարաբերությունները նախկին ռազմաստրկատիրական ավագանու փոխարեն առաջ քաշեցին շահագործող նոր դասակարգ, հանձին հայկական նախարարական դասի և տարբեր աստիճանի հողատերերի, որոնց ձեռքում կենտրոնացվեց երկրի այդ հարստությունն ու իշխանությունը։

Դասակարգային պայքարը Հայաստանում սուր բնույթ ստացավ Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում։ «Չորրորդ և հինգերորդ դարերուն Արշակունեաց Հայաստանի երկրամասը դարձավ սոցիալական շարժումներու և դասակարգային պայքարի թատերաբեմ»— գրում է հեղինակը (էջ 69)։ Շահագործողների դեմ ճնշվածների անհատական դիմադրությունները աստիճանաբար վերածվում են մասսայական ելույթների, խմբական ապստամբությունների։ Գրքում մանրամասն խոսվում է այդ շրջանում Հայաստանում ծնունդ առած «բորբորիանոսների» ու մծղնեության հակաֆեոդալական կրոնական աղանդների, պավլիկյան և Բաբեկի գյուղացիական ապստամբությունների, 8-րդ դարի վերջում Չորրորդ Հայքի արծաթի և կապարի հանքերի հանքագործների հուզումների մասին։

Սոցիալական թշվառության դատապարտվածների ազատագրական պայքարը ամենուրեք դաժանորեն ճնշվում էր տիրողների կողմից, իսկ հայ եկեղեցին որպես հերետիկոսություն ու «չարագործություն» էր հռչակում տիրողների դեմ ծագած ապստամբության ամեն մի փորձ։

Իհարկե, միջնադարյան գյուղացիական շարժումները չէին կարող հաղթական վախճան ունենալ և չունեցան։ Ճիշտ է նկատում հեղինակը, թե «Պավլիկեան շարժումը (ինչպես նաև մյուս ապստամբություններն ու հուզումները—Հ. Ս.) աշխատավոր, շահագործուող դասակարգի քաղաքական պայքարի շարժումն էր, որ իր տարերային անկազմակերպ բնոյթով տիրող կարգերու, ֆեոդալական խիստ ու բիրտ շահագործման դեմ չէր կրնար կռուիլ ու յաղթել, ատոր համար այ ան դատապարտուած էր պարտութեան և վերջ ի վերջո պարտուեցաւ» (էջ 76)։

Բագրատունյաց թագավորության շրջանի Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմությունը դասակարգային պայքարի տեսանկյունով վերլուծելուց հետո Լ. Մարտիրոսյանը շարադրում է հայ ժողովրդի դասակարգային պայքարի պատմության կարևորագույն դեպքերը, որոնք տեղի ունեցան հայկական պետականության ոչնչացումից հետո եկած ժամանակաշրջանում, մինչև որ Հայաստանը վերջնականապես մասնատվեց արաբների ու բյուզանդացիների, իսկ հետագայում պարսիկների ու թուրքերի կողմից։

Հայ ժողովրդի կյանքը անտանելի դարձավ հատկապես այն բանից հետո, երբ նրա հայրենիքը մասնատվեց իսլամական երկու պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի միջև։ Բայց ազգային ամենավայրենի ճնշման պայմաններում նույնիսկ, ինչպես տեղին նկատում է

հեղինակը, երբեք չմեղմացան սոցիալական հակասությունները հայ իրականության մեջ։ Հայ ոչայան, գրում է նա, դժոխային կացության մեջ գտնվելով հանդերձ չկը ներկայացներ մի ինքնուրույն կազմակերպություն։ Ան իր ամբողջ զանգուածով ըլլալով հարստահարող և հպատակ մի հասարակություն, իր մեջ ուներ տիրողներ և ենթարկուողներ, հարստահարողներ ու հարստահարուողներ, շահագործողներ և շահագործուողներ։ Այո, հայությունը մյուս հպատակ ազգերուն նման իր մեջ ուներ դասակարգեր, որոնք ժողովուրդին ուժերը բաժնելու տեսակետեն նպաստավոր էին տիրապետող իշխանությանն համար» (էջ 127)։ Հայ շահագործող դասակարգի մեջ էին մտնում հոգևորականները, վաճառականները, ուղղանավորները, հարուստ գյուղացիները, իսկ շահագործվողների մեջ՝ արհեստավորները և գյուղացիության ճնշող մեծամասնությունը։

Իսլամական պետությունների դաժան տիրապետության երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը երբեք չկորցրեց ազատության հույսը, չդադարեց իր մարդկային իրավունքների համար պայքար մղելուց։ Գրքում մանրամասն խոսվում է հայ ժողովրդի ազգային-ազատագրության և անկախ պետականություն ստեղծելու համար նրա լավագույն զավակների՝ Իսրայել Օրու, Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի, Հովսեփ Էմինի, Հովհաննես Լազարյանի և ուրիշների թափած հսկայական ջանքերի մասին, որոնք բոլորն էլ վերջացան անհաջողությամբ։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը նոր էտապ թևակոխեց 19-րդ դարի վերջին քառորդում։ Ժողովրդի ազատագրության ջատագով անհատներին փոխարինելու եկան քաղաքական կազմակերպություններն ու կուսակցությունները՝ արմենականները, սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, հայ հեղափոխական դաշնակցությունը։

Սակայն ազգային ստորացումից և սոցիալական թշվառությունից դուրս գալու միակ ելքը հայ ժողովրդին ցույց տվին կոմունիստները։

Համառոտ ակնարկ նետելով դաշնակների տիրապետության օրերի Հայաստանի պատմության վրա, հեղինակը նշում է երկիրը կառավարելու նրանց բացահայտ անճարակությունն ու անընդունակությունը, մանրամասն նկարագրում է «Հայկական հանրապետության» ապիկար կառավարողների անօրեն գործողությունները, քննադատում ու մերկացնում նրանց ներքին ու արտաքին հակաժողովրդական քաղաքականությունը։

«Հայկական հանրապետությունը» որպես «բոլոր հայերի միակ հայրենիքը» ներկայացնելու դաշնակ պատմագիրների ջանքերին հակառակ այդ «հանրապետության» գոյության 2,5 տարիների ընթացքում երբեք այնտեղ չդադարեցին կամ չթուլացան հակամարտությունները թշնամական դասակարգերի՝ շահագործողների ու շահագործվողների միջև։ Դաշնակների իշխանությունը չլուծեց և չէր էլ կարող լուծել սոցիալական որևէ հարց երկրում։ Արտահայտելով շահագործող դասակարգերի շահերը, դաշնակների կառավարությունը պահպանում և պաշտպանում էր անցյալից մնացած տնտեսական կացութաձևերը, ամրապնդում կապիտալիստների, կուլակների ու կալվածատերերի քաղաքական ու տնտեսական դիրքերը, անողոք պայքար մղում հեղափոխական ուժերի դեմ։

Սոցիալիստական հեղափոխության հաղթական երթը Հայաստանի սահմաններում կանխելու բոլոր փորձերը, որ կատարեցին դաշնակցական արկածախնդիրները, դատապարտվեցին ձախողման։ Իր ազգային ու սոցիալական ազատագրության հույսը ամրողջովին կապելով հեղափոխական Ռուսաստանի հետ, հայ ժողովուրդը վճռականորեն ոտքի ելավ տապալելու շահագործողների անարգ լուծը։ 1920 թ. Մայիսյան ժողովրդական ապստամբությունը, չնայած նրա պարտությանը, ցույց տվեց, որ Հայաստանը աներեր ընթանում է սոցիալիստական հեղափոխության ուղիով։ «1920 թվականի մայիսյան ապստամբությունները,—գրում է Լ. Մարտիրոսյանը,—Հայաստանի բանվորությունն ու գյուղացիությունը թրծեցին յեխափոխական փորձառությամբ, և անոնք նույն փորձառությամբ զինուած... միասնական ուժով տապալեցին դաշնակցական ոճրածին իշխանապետությունը և 1920 թ. նոյեմբեր 29-ին հաստատեցին Հայաստանի սոցիալիստ-սովետական իշխանությունը, որ նոր դարպլուխ մը բացավ հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ» (էջ 220)։

Գրքի այս բաժինը հեղինակը եզրափակում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո բնաշխարհի հայության և սփյուռքահայության տնտեսական, սոցիալական ու քաղաքական վիճակի համառոտ նկարագրությամբ։

Աշխատության երկրորդ մասում դասակարգային պայքարի պատմությունը շարադրված է Ռուսաստանի օրինակով։ Հնադարյան շրջանի հասարակական կացութաձևերի քայքայումից մինչև հակամարտ դասակարգերի առաջացումից սկսած մինչև երկրում սոցիալիստական արտադրահարաբերությունների հաղթանակը Ռուսաստանի ամբողջ պատմությունը եղել է դասակարգային

անհաշտ պայքարի ու հակամարտությունների պատմություն։ Ռուսական հասարակության դասակարգային պայքարի գիծը հեղինակը ցույց է տալիս նրա պատմության անցած էտապների հաջորդական շարադրման միջոցով։ Նա նշում է, որ դասակարգային պայքարը ռուսական հասարակական-քաղաքական կյանքի առանցքն է եղել մոսկովյան պետության մեջ՝ Պետրոս Մեծի դահակալության տարիներին, ճորտատիրական կարգերի ամենասև օրերին և Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունների առաջացման ու զարգացման ժամանակաշրջանում։

Գրքում ցույց է տրված նաև իշխանության համար Ռուսաստանի բանվոր դասակարգի մղած գոտեմարտերի, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի, պրոլետարական պետության ստեղծման ու ամրապնդման համար բոլշևիկյան կուսակցության պայքարի, մեր երկրում սոցիալիզմի կառուցման ճանապարհին եղած դժվարությունների հաղթահարման, նոր հասարակարգի կառուցման ընթացքում սովետական ժողովրդի թափած զերմարդկային ճիգերի ու երվաճած մեծ հաղթանակների պատմությունը։

Աշխատության երրորդ և չորրորդ բաժիններում դասակարգային պայքարի պատմությունը շարադրված է Չինաստանի և Կուբայի օրինակով։

Լ. Մարտիրոսյանի մեծածավալ գիրքը, որ նվիրված է սոցիալ-քաղաքական կարևորագույն հարցի, չի կարելի գիտական երկասիրություն համարել։ Այս գիրքը ամենից առաջ քրեստոմատիայի դեր կարող է կատարել, քանի որ այնտեղ տեղավորված նյութը չի բարձրանում փաստերի էմպիրիկ շարադրանքի մակարդակից և ձեռք չի բերում գիտական նշանակություն։ Այս բանը լավ է երևում Ռուսաստանին, Չինաստանին և հատկապես Կուբային նվիրված բաժիններից։ Այսպես, Կուբային նվիրված բաժնում, որ զբաղեցնում է աշխատության 645—871 էջերը, հեղինակը ամբողջ նյութը մատուցել է Կուբայի հեղափոխության մասին Արևմուտքում լույս տեսած 3—4 աշխատություններից արված քաղվածքների միջոցով։

Միաժամանակ պետք է նշել, որ գրքի այն մասում, որտեղ Լ. Մարտիրոսյանը հանդես է գալիս որպես հեղինակ, նա անմիջապես ի հայտ է բերում պատմական երևույթները օբյեկտիվորեն գնահատելու անկարողություն։ Ուստի պատահական չէ, որ գրքում տեղ են գտել բազմաթիվ հակագիտական սկզբունքներ, խեղաթյուրվել են պատմական իրադարձություններն ու երևույթները։

Լևոն Մարտիրոսյանը շատ դեպքերում նյութի շարադրման ընթացքում հանդես է բերում մանրբուրժուական սոցիալիստին հատուկ անհետևողականություն ու անկայունություն։ Դա հատկապես ցայտուն դրսևորվում է այն դեպքում, երբ պրոբլեմը քննարկվում է պրակտիկ, գործնական տեսանկյունով։ Չնայած հեղինակի այն բոլոր հավաստիացումներին, թե ինքը նյութի հետազոտություններ կատարել է նլնելով հեղափոխական մարքսիզմի դիրքերից, այնուամենայնիվ, փաստը մնում է փաստ, որ նա չի կարողացել դրսևորել անհրաժեշտ կայունություն, բնական վերաբերմունք Արևմուտքում լույս տեսնող հակակոմունիստական, հակասովետական ուղղության գրականության հեղեղի նկատմամբ։ Հեղինակը միանգամայն սխալ և խեղաթյուրված պատկերացում ունի Սովետական Միության և, մասնավորապես, Սովետական Հայաստանի տնտեսական ու սոցիալական վիճակի, դասակարգային ուժերի փոխհարաբերության, սովետական դեմոկրատիայի և ուրիշ շատ կարևորագույն հարցերի մասին։

Ընդհանուր առմամբ, ճիշտ պատկերացնելով անցյալ դարերում օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի ազատագրական ընդվզումները, հեղինակը, սակայն, տարօրինակ տեսակետ է զարգացնում հայրենիքի ու հայրենասիրության մասին։ Նա ընդհանրապես ժխտում է հայրենասիրության զգացումները դասակարգային հասարակության մեջ, տարբերություն չի դնում տիրող դասակարգի կեղծ «հայրենասիրության» և աշխատավոր ժողովրդի իրավ հայրենասիրության միջև։ Հայրենասիրությունը համարելով «ինքնազոհողութեան առաջնորդող անրնական զգացում մը», Լ. Մարտիրոսյանն ուղղակի գրում է, թե այն «կրոնքի հաշիշեն ավելի զորավոր և ավելի տևական ազդեցություն ունեցող հաշիշ է» (էջ 15), որը կոչված է պաշտպանելու շահագործողների հայրենիքը։

Հարցին նման ձևով մոտենալու դեպքում անհնարին է դառնում բացատրել օտար նվաճողների դեմ ոտքի եկած ժողովրդական ամենալայն մասսաների անձնազոհության ու հերոսության բազում օրինակները, հայրենիքի համար զոհվելու նրանց պատրաստակամությունն ու վճռականությունը։ Ժողովրդական մասսաները ազգային-ազատագրական պայքարի մեջ են ընդգրկվում ոչ թե սնփական հարստահարիչներին հաճոյանալուց դրդված, կամ այն պատճառով, որ խաբված են լինում «կրոնի հաշիշեն ավելի զորավոր... հայրենասիրությունեն», այլ նրա համար, որ ապատ ապրելու զգացումը, հետևաբար հայրենասիրությունն ու հայրենապաշտությունը կազմում են մարդ էակի հոգեկան աշխարհի բնական ու անբաժանելի տարրերը։

Սխալ պետք է համարել հեղինակի այն պնդումը, թե առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի արևմտյան հատվածի բնաջնջումն ու տեղահանությունը նախորոք ծրագրված ու պլանավորված չէր Թուրք կառավարողների կողմից, թե հայերի կոտորածի հիմնական պատասխանատվությունը ընկնում է «դաշնակցություն» կուսակցության ուսերին (էջ 166)։ Իհարկե, չի կարելի ժխտել այն իրողությունը, որ դաշնակցությունն իր բազմաթիվ խելահեղ քայլերով փաստորեն ցուր լցրեց Թուրք ջարդարարների ջրաղացին, արագացրեց հայության գենոցիդի դիվային քաղաքականության իրագործումը։ Սակայն անժխտելի փաստ է, որ արևմտահայության բնաջնջումն այն ահավոր ծրագրի կենսագործումն էր, որ սկսած անցյալ դարի վերջին բառորդից մանրամասնորեն մշակվել էր Թուրքական ռեակցիայի կողմից, որը հարմար առիթի էր սպասում այն անմիջապես գործադրելու համար։

Այնուհետև, հեղինակը նույն ոգով զարգացնում է այն տեսակետը, թե 1919—1920 թթ. ընթացքում Թուրքիայի և Հայկական հանրապետության միջև ծագած պատերազմների պատասխանատուն վերջինիս կառավարությունն էր (էջ 169)։ Նույն միտքը արտահայտելով մի ուրիշ տեղ (էջ 215), նա գրում է. դաշնակ կառավարությունը «...ծովն ծով Հայաստան մը ունենալու արկածախնդիր քաղաքականության հետևանքով պատերազմի բռնուելով Թուրքիոյ հետ, Հայաստանի կարևոր մասերը՝ Կարսը, Արդահանը, Իգդիրը ամոթալի պարտությամբ յանձնեց Թուրքին»։

Ճշմարիտ է, իհարկե, որ դաշնակցական կառավարության՝ քաղաքականությունից ու դիվանագիտությունից բորիկ վարժապետ-նախարարների անհեռատեսության, ապիկարության ու երկիրը կառավարելու անընդունակության հետևանքով Հայկական հանրապետությունը 1919—1920 թթ. չկարողացավ խուսափել Թուրքիայի հետ պատերազմական ընդհարումներից, որոնք կործանարար էին հայ ժողովրդի համար։ Սակայն չպետք է մոռանալ, որ այդ տարիներին Հայաստանը, այնուամենայնիվ, պաշտպանական կռիվներ էր մղում Թուրքիայի դեմ, որոնք ըստ էության, մեր ժողովրդի համար գոյության կռիվներ էին բառիս լիակատար իմաստով։ Ինչ վերաբերվում է Թուրքիային, ապա նրա ղեկավարները, 1919—1920 թթ. Ռուսաստանում հաղթանակած բոլշևիկյան հեղափոխության պաշտպանների կեղծ դիմակ հագած, իրականում շարունակում էին Թուրքիայի նախկին կառավարողների իմպերիալիստական քաղաքականությունը Անդրկովկասի, մասնավորապես, Հայաստանի նկատմամբ։ Քեմալական պրովոկացիաների հետևանք էր նաև 1920 թ. աշնանը ծագած հայ-թուրքական պատերազմը, որից խուսափել չկարողացան Հայաստանի այն օրերի տհաս կառավարողները։ 1919—1920 թթ. հայ-թուրքական ընդհարումների մեղքը բարդելով դաշնակների վրա, անհնարին է բացահայտել Հայաստանի դեմ քեմալական արշավանքների իմպերիալիստական բնույթը, արշավանքներ, որոնք սպառնում էին զլխովին բնաջնջել նաև արևելահայությանը։

Լինելով հնչակյան կուսակցության գաղափարախոսներից մեկը, գրի հեղինակը հայ իրականության մեջ այդ կուսակցության խաղացած դերը գնահատելիս դուրս է գալիս օբյեկտիվության սահմաններից, նրան վերագրելով այնպիսի ծառայություններ, որոնց մասին ավելի համեստ արտահայտվելու դեպքում գործը մեծ չափով կշահեր։

Իհարկե, չի կարելի ուրանալ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի տարիներին հնչակյան կուսակցության թափած ճիգերը։ Սակայն չի կարելի նաև համաձայնել հեղինակի այն դատողության հետ, թե «Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան ծննդեան թվականը» (1887) պետք է համարել «...հայ աշխատավոր ժողովուրդի դասակարգային գիտակցութեան զարթնումի և հայ յեղափոխութեան կշռադատեալ յայտնութեան աստղաղարդ թվական» (էջ 161), թե հայ ժողովուրդը իր փրկության համար պարտական է հնչակյան կուսակցությանը, թե «Հնչակեան կուսակցութեան երևումով վերազարթնող հայութիւնը կը մտներ նոր դարաշրջան մը, ժողովրդական դանգուածային յեղափոխութեան դարաշրջանը, որ հին փառքերու անիրականանալի երազով շրջապատուած չէր» (էջ 163—164)։ Դեռ ավելին, չպահպանելով չափի անհրաժեշտ զգացում, նա ուղղակի գրում է. «...հնչակեան դպրոցի սաներու հերոսական ջանքերով և ոուս յեղափոխական ժողովուրդի եղբայրական օգնութեամբ էր, որ իրականացաւ այսօրուան սոցիալիստ Սովետական Հայաստանի հանրապետությունը» (էջ 167)։

Տուրք տալով սուբյեկտիվիզմին, է. Մարտիրոսյանը բոլշևիկյան կուսակցության պատմությունը կամայականորեն բաժանում է երկու շրջանի։ Առաջին շրջանը, նրա կարծիքով, վերջանում է Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով, իսկ երկրորդ շրջանը շարունակվում է մինչև այսօր։ Ըստ որում, բոլշևիկյան կուսակցության պատմության առաջին շրջանը նա նկարագրում է որպես հերոսամարտերով լի պատմություն, իսկ երկրորդ շրջանի պատմությունը՝ որպես մարքսիզմից ասոցիանական հանանջի պատմություն։

Հարվի չնայելով պատմական փաստերի հետ, հեղինակը մեր երկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը համարում է անժամանակ և անկատար։ Ժխտելով ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման փաստը, Լ. Մարտիրոսյանը մանրբուրժուական սոցիալիզմի դիրքերից արդարացնում է Տրոցկու և նրա համախոհների պայքարը կոմունիստական կուսակցության ինդուստրացման ու կոլեկտիվացման քաղաքականության դեմ, ճրգնում է Տրոցկուն ներկայացնել որպես հետևողական մարքսիստի և հավատարիմ լենինյանի, որը գոհ գնաց «կուսակցական բյուրոկրատիայի» դեմ մղած անհավասար պայքարում։ Լ. Մարտիրոսյանը բանն այնպես է ներկայացնում, թե տրոցկիզմի դեմ պայքարը միայն ու միայն Ստալինի գործն էր, այլ ոչ թե կոմունիստական կուսակցության, թե այդ պայքարը օրինաչափ ու անհրաժեշտ չէր պատմական տվյալ ժամանակաշրջանում, թե իրականում ոչ մի սոցիալ-դեմոկրատական թևքում չկար կուսակցության ներսում, այլ այն հնարել էր Ստալինը՝ Տրոցկու հետ իր անձնական հաշիվները մաքրելու համար։

Իհարկե, չի կարելի արդարացնել իր հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու Ստալինի մեթոդները։ Սակայն չի կարելի նաև մոռացության տալ, որ այդ տարիներին, երբ սովետական երկիրը, հակառակ միջազգային իմպերիալիզմի բոլոր դավերին, մեն-մենակ գնում էր սոցիալիզմի հիմքերը, տրոցկիստները, ամեն տեսակի աջերը և մեր կուսակցության շարքերում խրամատավորված մյուս օպորտունիստական, սոցիալ-դեմոկրատական տարրերը, իրենց հերթին, ներսից դժվարացնում ու խոչընդոտում էին կոմունիստական կուսակցության ձեռնարկումները, արգելակում երկրի ինդուստրացման ու կոլեկտիվացման լենինյան ծրագրերի կենսագործումը։ Ուստի, սոցիալիզմի հաղթանակը իրական փաստ կարող էր դառնալ միայն տրոցկիզմի ու հակալենինյան մյուս հոսանքների դեմ կուսակցության մղած դաղափարական անհաշտ պայքարի պայմաններում, պայքար, որ վերջացավ կուսակցության լենինյան մեծամասնության լիակատար հաղթանակով։

Ջափաղանցելով մեր երկրում անհատի պաշտամունքի գործած ավերները և ձայնակցելով Արևմուտքի հակակոմունիստական «Սովետոլոգներին» երգչախմբին, Լ. Մարտիրոսյանը գրում է թե այդ պաշտամունքի ազդեցության տակ, իբր ամբողջովին կերպարանափոխվեց բոլշևիկյան կուսակցությունը, թե նրա շարքերում հանգես եկավ «կուսակցական բյուրոկրատիա», որը կուսակցությունը առաջնորդեց վերասերման ճանապարհով (էջ 423—424)։

Լ. Մարտիրոսյանը միանգամայն խեղաթյուրված պատկերացում ունի Հայրենական մեծ պատերազմում կոմունիստական կուսակցության տիտանական գործունեության վերաբերյալ։ Նախ նա կասկածի տակ է դնում մեր երկրի խաղաղասիրական քաղաքականությունը պատերազմին նախորդած տարիներին։ Ավելին, պատերազմի առաջացման համար պատասխանատվության զգալի մասը անհիմն կերպով բարդում է սովետական կառավարության ուսերին։ Պատերազմը արդարացի և իմպերիալիստական համարելով պատերազմող բոլոր կողմերի համար, որքան էլ զարմանալի է, Լ. Մարտիրոսյանը գրում է. «Ի՞նչ շահ ուներ խորհրդային ժողովուրդը, մասնավորապես հայ ժողովուրդը, որ իր լավագույն զավակները պիտի զոհեր իմպերիալիստների պատերազմին, որ կը մղուեր միմեանց ձեռքեն կողոպուտները յափշտակելու համար»։ Եվ ապա՝ «Եթե մեկը հարցներ հայ զինուորին թե՝ ինչո՞ւ կը կռուի, զինուորը հասկնալի պատասխան մը չուներ տալու, որովհետև ինքն ալ չէր գիտեր, թե ինչու կը կռուեր» (էջ 222)։

Ոչ, պարոն Մարտիրոսյան։ Ինչպես ոուս, այնպես էլ հայ զինվորը քաջ գիտեր, թե հանուն ինչի է նա անողոք կռվի դաշտ ելել արյունարբու թշնամու դեմ։ Սովետական զինվորը գիտեր, որ ինքը պաշտպանում է իր՝ աշխարհում առաջին սոցիալիստական հայրենիքը՝ երկրագնդի բոլոր ճնշվածների հույսն ու ապավենը, որ ինքը պաշտպանում է իր ժողովրդի գոյությունը, իր ընտանիքի պատիվը։ Պատմության մեջ ամենահեղ այդ պատերազմը, լինելով անարդարացի ու թալանչիական ֆաշիստական տերությունների կողմից, արդարացի ու ազատագրական էր սովետական ժողովրդի համար։ Դեռ ավելին, երկրորդ համաշխարհային պատերազմի երկրորդ էտապում, երբ պատերազմի մեջ ներքաշվեց սովետական երկիրը և ստեղծվեց հակաֆաշիստական կոալիցիա, մեծ չափով փոխվեց նաև ՍՍՀՄ-ի այն օրերի դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից մղվող պատերազմի բնույթը։ Այն նույնպես առաջադիմական նշանակություն ստացավ։

Լ. Մարտիրոսյանը դարձյացնում է մի զարմանալի «տեսություն» ևս։ Նրա կարծիքով սովետական մարդիկ ֆաշիստական հորդաների դեմ հազիվ թե անձնազոհությամբ ու անողոքությամբ մարտնչեին, եթե գերմանացիները օկուպացված տերիտորիաներում իրենց ավելի «քաղաքավարի» պահեին ու համեմատաբար քիչ չարագործություններ թույլ տային խաղաղ բնակչության նկատմամբ։ «Եթե Հիթլեր միմիայն պատերազմական գործողությամբ զբաղեր և խոր-

հրդային սահմաններեն ներս մտնելեն ետոյ յայտարարեր ինքզինքը որպես ճնշուած ժողովուրդներու ազատարարը, այն ատեն խորհրդային ժողովուրդները, որոնք բավականին մոտեցեր էին վերջին տարիներուն ռուս-գերման բարեկամական յարաբերութեան ընթացքին. գերման ժողովուրդին զինքը պիտի դիմաւորեր ծաղկեփունջերով» (էջ 440)։ Իսկ ինչու հիտլերականները սովետական խաղաղ բնակչության նկատմամբ գործադրում էին ամենաանմարդկային մեթոդներ։ Որովհետև սովետական մարդիկ նահանջի ճանապարհին ոչնչացնում էին ամեն բան, իրենց հետևից թողնելով միայն ավերակներ, իսկ դա առաջ էր բերում թշնամու կատաղությունը,— եզրակացնում է Լ. Մարտիրոսյանը։ Եթե նահանջողները թշնամուն թողնեին նյութական արժեքները, ապա նա, երբ, հազիվ թե գազանությունների դիմեր խաղաղ բնակչության նկատմամբ, հրդեհի մատներ գրաված բնակավայրերը, ոչնչացներ կամ ստրկական աշխատանքի քշեր հարյուր հազարավոր մարդկանց։

Պարզ է, որ նման տեսակետ կարող է պաշտպանել ու զարգացնել միայն նա, ով բացարձակապես անտեղյակ է, թե ինչ է նշանակում ֆաշիզմը, թե ինչ ստրատեգիական հեռուն գնացող նպատակներ էին հետապնդում հիտլերականները՝ սովետական օկուպացված շրջաններում սիստեմատիկաբար ոչնչացնելով խաղաղ բնակչությանը, կամ նա, ով թշնամանք է տածում դեպի աշխարհում առաջին աշխատավորների պետությունը, Սովետական Միությունը, չնայած իր բազում կեղծ հավաստիացումներին, թե ինքը անկեղծորեն ուրախանում է այդ երկրի հաջողություններով։

Լ. Մարտիրոսյանը, այնուհետև, ընթերցողին խիստ չափազանցված է ներկայացնում Հայրենական պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կողմից ՍՍՀՄ-ին ցույց տված ռազմական օգնությունը։ Նրա պնդմամբ, ռազմամթերքով, հանդերձանքով ու սննդամթերքով օգնելով սովետական բանակին, ԱՄՆ-ը փաստորեն ՍՍՀՄ-ի հետ միասին հավասարաչափ կիսեց պատերազմի ծանրությունը։ Դեռ ավելին, եթե չլիներ ԱՄՆ-ի օգնությունը, իբր, պատերազմում ՍՍՀՄ-ի պարտությունը կլիներ անխուսափելի։ «Ամերիկան,— սևով սպիտակի վրա գրում է նա,— եթե իր առատ ռազմամթերքով, իր հրասայլերով, իր ռմբաձիգ օդանավերով օգնության չհասներ, ռուս ժողովուրդի տուած 18 միլիոն զոհերուն վրա գուցե բարդուեր 18 միլիոն զոհ ևս, իսկ յաղթութեան երազը կանցներ ամպերուն վրայէն» (էջ 440)։ Սա արդեն պատմության բացահայտ խեղաթյուրում է։ Նախ հայտնի է, որ Հայրենական պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կողմից ՍՍՀՄ-ին ցույց տված ռազմական օգնությունը կազմել է սովետական բանակի կողմից թշնամու դեմ գործածված ռազմամթերքի միայն 5 տոկոսը, որը, իհարկե, չէր կարող վճռական նշանակություն ունենալ պատերազմի ելքի տեսակետից։ Երկրորդ, այդ տարիներին ԱՄՆ-ը չէր կարող չօգնել ՍՍՀՄ-ին, քանի որ նա լավ գիտեր, որ վերջինիս պարտության դեպքում ֆաշիզմը այնուհետև հաշիվները կմաքրեր ԱՄՆ-ի, Անգլիայի և նրանց դաշնակիցների հետ։

Լ. Մարտիրոսյանի աշխատության մեջ տեղ են գտել նաև տեսական կարգի մի շարք սխալներ ու խեղաթյուրումներ։ Այսպես, տարբերություն չդնելով բուրժուական պետական սեփականության և սովետական պետական սեփականության միջև, հետևապես նաև վարձու աշխատանքի տմարդի շահագործման միջոցով ստեղծված ու կապիտալիստի գրպանը գնացող հավելյալ արժեքի և սովետական աշխատավորի կողմից հասարակության համար ստեղծած հավելյալ պրոդուկտի միջև, նա գրում է. «Հողը և արդյունաբերության աղբյուրները կը պատկանին պետութեան (սովետական— Հ. Ս.)։ Ռուսական արդյունաբերությունը կապիտալիստական բնույթ ունի։ Ռուս գործավորը վարձու գործավոր է։ Անոր արտադրածները ապրանքներ են, որոնք շուկա կը հանուին ծախուելու համար։ Ինչ որ ռուս բանուորները կ' արտադրեն ավելի քան իրենց աշխատավարձի արժեքը, դա յավելեալ արժեք է (շահը), որ փոխանակ անհատի մը կամ որոշ ընկերութեան մը երթալու, կերթա պետութեանը» (էջ 434)։

Ակնհայտ է, որ հեղինակն այստեղ բացահայտ մոլորության մեջ է։ Ինչպե՞ս կարելի է աչքերը փակել և չտեսնել, որ սովետական պետությունը աշխատավորների պետություն է և վերջիններիս կողմից ստեղծված հավելյալ պրոդուկտը անցնելով պետության տնօրինության տակ, նորից հասարակական ֆոնդերի ձևով վերադառնում է իրենց՝ աշխատավորներին, այլ ոչ թե հոսում առանձին անհատների գրպանը։

Սովետական պետությունը ամեն տարի հսկայական միջոցներ է ծախսում բնակարանային շինարարության, լուսավորության, կուլտուրայի զարգացման վրա։ Պետությունը ստանձնել է աշխատավորների առողջության պահպանման հոգսը։ Ազգային եկամտի աճման հիման վրա անընդհատ բարձրանում են նրանց եկամուտները։ Դրանից բացի, սովետական մարդու նյութական ու կուլտուրական աճող պահանջների բավարարման նպատակով պետությունը հսկայական միջոցներ է տրամադրում հանրային ֆոնդերի միջոցով։ Օրինակ, 1965 թ. հասարակա-

կան ֆոնդերի հաշվին բնակչության տրված վճարումներն ու արտոնությունները կազմեցին ավելի քան 36 միլիոն ռուբլի։ Ներկայումս այդ ֆոնդերի հաշվին պահվում են ավելի քան քսան միլիոն թոշակառուներ։ Բարձրագույն, միջնակարգ և պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնական հաստատությունների չորս միլիոն սովորողներ ապահովված են պետական թոշակով և հանրակացարաններով, դիշերօթիկ դպրոցների շուրջ 900 հազար սովորողներ հիմնականում պահվում են պետության հաշվին։ Ավելի քան յոթնկես միլիոն բանվորներ, կոլտնտեսականներ, ծառայողներ և նրանց երեխաները ամեն տարի սոցիալական ապահովագրության և կոլտնտեսությունների միջոցների հաշվին հանգստանում են ու բուժվում սանատորիաներում, հանգրստյան տներում, պիոներական ճամբարներում։ Մոտ յոթ միլիոն մայրեր նպաստ են ստանում պետությունից։ Ահա թե ուր է գնում սովետական աշխատավորների քրտինքով ստեղծված սոցիալիստական հավելյալ արդյունքը։

Ենթարկվելով սովետական երկրի դասակարգային կառուցվածքի վերաբերյալ Արևմուտքում ուժգնորեն պրոպագանդվող հակակոմունիստական տեսակետների ազդեցությանը, Լ. Մարտիրոսյանը սխալ պատկերացում է կազմել մեր երկրի դասակարգերի և նրանց փոխհարաբերությունների մասին։ Նա առանց որևէ փաստարկի հայտարարում է, թե սովետական սոցիալիզմը այսօր այնպիսին չէ, ինչպես որ այն պատկերացնում էին Մարքսը, Էնգելսը և Լենինը և որ նրանց կանխատեսածից միանգամայն տարբեր է նաև ՍՍՀՄ-ի դասակարգային կառուցվածքը (էջ 224, 434)։

Ընկնելով արևմտյան պրոպագանդայի ազդեցության տակ, Լ. Մարտիրոսյանը թղթին է հանձնում նաև այնպիսի բաներ, որոնք ոչնչով չեն տարբերվում, ասենք, կոմունիզմի այնպիսի բացահայտ հակառակորդների տեսակետներից, ինչպիսին դաշնակներն են։ Լսենք Լ. Մարտիրոսյանին։

«...Հարց տանք, թե ե. Ռուսաստանի մեջ հասարակ բանվոր մը կրնա՞յ առանձնաշնորհեալ (*) տիրող (**) դասակարգի մեջ մտնել։ Այս հարցման պատասխանն է այո. եթե հարցը տեսարանականորեն վեր առնենք, և ոչ՝ եթե գործնական դիծը նկատի ունենանք։ Որոշ մթին արգելքներ կան, որոնք անկարելի կդարձնեն բանուորական և գյուղացիական չքավոր զանգուածներուն բարձրանալ և հասնիլ հեղինակավոր դիրքի։ Այդ արգելքներու կարգին ամենեն նշանակալին է ամենարարձր ուսումնական ճյուղերու տիրանալու արգելքը»։ Միայն հազվադեպ պարագաներում,—շարունակում է նա,—հասարակ բանվորի զավակը իր արտասովոր ուշիմությամբ կարող է վարձատրվել և պետական ծախսով մտնել համալսարան (էջ 436)։

Այժմ լսենք դաշնակ Հրայր Խալաթյանին.

«...Մի՞թե ամեն սովետական մարդ հնարավորություն ունի բարձրագույն կրթություն ստանալու... Բանուորի որդին կամ որդիները չեն կարող բարձրագույն կրթություն ստանալ» (տե՛ս «Ալիք» ամսագիր, 1963, № 9, էջ 75)։

Լ. Մարտիրոսյանը սխալ պատկերացում ունի նաև միջազգային կոմունիստական շարժման ներսում ծագած տարաձայնությունների բնույթի, այդ տարաձայնությունների պատճառների վերաբերյալ։ Անվերապահորեն պաշտպանելով դոգմատիկների ու «ձախ» կոմունիստների պայքարը ՍՄԿԿ և մյուս եղբայրական կոմպարտիաների դեմ, նա այդ պայքարը համարում է օրինաչափ ու անհրաժեշտ միջազգային կոմունիստական շարժման հետագա զարգացման տեսակետից։ Հեղինակը չի կարողացել ըմբռնել, որ դոգմատիզմն առանձին երկրներում այդ երկրների կոմպարտիաների վրա բնակչության մանրբուրժուական միլիոնավոր մասսաների զանգվածային ճնշման արդյունք է։ Չկարողանալով ամուր կանգնել այդ ճնշման դեմ-հանդիման, այդ կուսակցությունների ղեկավարները երերվում ու թեքվում են կեղծ հեղափոխականության ու ֆրազամոլության ուղին, իրենց համարելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի անաղարտության համար միջազգային մասշտաբով մղվող պայքարի ամենահետևողական ախոյաններ։

Հավանություն տալով մեր երկրի հասցեին դոգմատիկների կողմից առաջ քաշված այն անհիմն մեղադրանքին, թե ՍՍՀՄ-ում որքան արագորեն են զարգանում արտադրողական ուժերը, այնքան նա արագորեն է թողնում օրթոդոքսալ մարքսիզմի դիրքերը և անցնում օպորտունիզմի ճանապարհը, Լ. Մարտիրոսյանը գրում է. «Սովետական երկիրները մասնավոր յաջողություններ արձանագրած են, նույնիսկ զանոնք կրնանք կոչել աւտակարգ յաջողություններ, բայց մեկ բան պարզ է, թե այդ յաջողությունները սոցիալիստական չեն» (էջ 441)։

Դոգմատիկների ու «ձախ» ֆրազոլոգների օրինակով Լ. Մարտիրոսյանը հակառակ է արտահայտվում երկու սիստեմների խաղաղ գոյակցությանը, գտնելով, թե սոցիալիզմի ու կապիտալիզմի վեճը կարող է լուծվել միայն պատերազմի միջոցով։ «Խաղաղ համակեցությունն... ան ալ պաղ պատերազմի այս շրջանի՞ն... Ահա անիրականանալի երազ մը...»,—գրում է նա (էջ

226)։ Եվ ապա՝ «Խաղաղ համակեցության առաջադրությունը որպես պրոպագանդի ատաղձ կամ խորհրդային երկրի աշխատավորության հիմնական պահանջ, անառարկելիորեն արդարացի է, բայց որպես իրականության առաջնորդողի ուղեգիծ, բացարձակապես անիրականանալի է» (էջ 452)։ «Կապիտալիզմի և սոցիալիզմի համակեցության թեորիան... իրականություն դառնալու տեսակետով բացարձակապես ցնորք է» (էջ 459)։

Հեղինակը չի կարողացել (կամ չի ցանկացել) ըմբռնել, որ խաղաղ գոյակցությունը դասակարգային պայքարի յուրատեսակ ձևերից մեկն է, որ այդ քաղաքականությունը ընավ էլ չի ենթադրում կապիտալիստական արտադրահարաբերությունների հավերժացում։ Խաղաղ գոյակցության տեսությունը լիովին ուժի մեջ է թողնում կապիտալիզմը սոցիալիզմով փոխարինելու երկաթյա անհրաժեշտության և անխուսափելիության մասին մարքս-լենինյան գաղափարը։

Համառոտ գծերով մոտավորապես այսպիսին է Լ. Մարտիրոսյանի «Դասակարգային կռիվների դիծը ազգերու պատմութեան մեջ» աշխատության առաջին հատորի բովանդակությունը։ Ինչպես տեսանք, աշխատությունն ունի որոշ ճանաչողական նշանակություն։ Սակայն այնտեղ տեղ են գտել պատմական իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի այնպիսի բացահայտ խեղաթյուրումներ, որոնք զրոյի են հավասարեցնում հեղինակի այն հավաստիացումները, թե ինքը սովետական կարգերի ջերմ ջատագովն է, սովետական մարդկանց բարեկամը։

Այստեղ են ասել «Աստված հեռու պահի մեզ նման բարեկամներից»։

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ